ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՐՈԴՆԻԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

(XIX դ. 60—70-ական թվականներ)

ՀՐԱՆՈՒՇ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Հեղափոխական նարոդնիկական շարժումներին հայերի մասնակցության պրոբլեմին ժամանակին ուշադրություն են դարձրել Լեոն, Գ. Ղարաջյանը (Արկոմեդ), Աշ. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը[1]*։ Հայ նարոդնիկների տնտեսագիտական հայացքների ուսումնասիրությամբ 1950-ական թվականներին հանդես եկավ պրոֆեսոր Վ. Ռշտունին։ Նարոդնիկական շարժման առանձին խնդիրներ լուսաբանվել են Ռ. Հովհաննիսյանի, Խ. Բարսեղյանի և Կ. Դանիելյանի աշխատություններում*[2]*։ Ուշագրավ է Ա. Հովսեփյանի և Մ. Թումանյանի հրապարակումը, որտեղ ընդգրկված են հետաքրքիր փաստաթղթեր՝ հայ նարոդնիկների գործունեության վերաբերյալ*[3]*։*

Նարոդնիկությունը Ռուսաստանում իբրև ինքնուրույն հասարակական հոսանք ձևավորվել է XIX դ. 60-ական թվականներին և հասարակական-քաղաքական ուժ դարձել դարի 70—80-ական թվականներին։ XIX դ. 60-ական թվականների վերջին ռուսական հեղափոխական շարժումներն ընթանում էին նարոդնիկական գաղափարախոսության ազդեցության տակ։ Ուսանողական շարժումների վրա հատկապես մեծ ազդեցություն ունեին Պ. Լավրովի, Մ. Բակունինի, Ն. Միխայլովսկու, Պ. Տկաչևի և Ս. Նեչաևի գաղափարները։ Այդ շրջանում էլ Ռուսաստանում նարոդնիկությունը ձևավորվում է իբրև ինքնուրույն քաղաքական հոսանք[4]*։*

Ռուսական առաջավոր մտքի ազդեցության տակ Պետերբուրգի և Մոսկվայի հայ ուսանողության մեջ նույնպես աստիճանաբար արմատավորվում էր ժողովրդին ծառայելու, նրան լուսավորելու, նրա սոցիալական և քաղաքական ազատագրման համար պայքարելու գաղափարը։ XIX դ. 60—70-ական թվականներին Մոսկվայում և Պետերբուրգում ծավալված նարոդնիկական շարժումների մեջ աչքի ընկան հայ երիտասարդներից Վասիլի Շահվերդյանը, Արշակ Նահապետյանը, Ստեփան Զարապովը, Զարմադ Իշխանյանը, Ստեփան Ղարդաշյանը, Հռիփսիմե և Եկատերինա Թումանյան քույրերը, Դավիթ

---

[1] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, նույնի՝ Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 1-ին, 2-րդ, Փարիզ, 1934—1935, Գ. Ղարաջյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, Աշ. Հովհաննիսյան, Դաշնակցության ոգին, Մոսկվա, 1929, Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940։

[2] Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1955, Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 1-ին, Երևան, 1967, Կ. Դանիելյան, Հայ գյուղացությունը 19-րդ դարում (1860—1890), Երևան, 1973։

[3] «Բաներեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 57—76։

[4] «История СССР», т. 5, М., 1968, стр. 150.

Այվազյանը, Կոստանդին Մամիկոնյանը, Օլգա Քանանովան ու նրա ամուսին Նիկոլայ Քանանովը և ուրիշներ։

Պետերբուրգում կովկասցի ուսանող երիտասարդության առաջին գաղտնի հեղափոխական նարոդնիկական ընկերությունը հիմնվեց 1860-ական թվականների վերջին, Նիկոլայ Կիպիանու կողմից։ Այս խմբակի անդամ էին նաև Ն. Քանանովը, Կ. Ալիխանյանը, Վ. Խաչակյանը և ուրիշ հայեր[6]։

1868/69 ուս. տարում Մոսկվայում և Պետերբուրգում ուժեղացան ուսանողական շարժումները։ Մի շարք հայ ուսանողներ այդ շարժումների մասնակիցների ու ղեկավարների թվումն էին։

Պետերբուրգի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններից ընտրված 59 ներկայացուցիչների մեջ, որոնք 1869 թ. ձմռանը գրավոր բողոք ներկայացրին իշխանությանը, Ս. Նեչաևի, Դ. Մակրևիչի և մյուսների կողքին էին նաև Վ. Շահվերդյանը, Ա. Խաչատրյանը (համալսարանից) և Ե. Ավետիսյանը (բժշկավիրաբուժական ակադեմիայից)[8]։ Գործի հետաքննության ժամանակ ուսանողական շարժման մասնակիցներ ճանաչվեցին նաև Ստեփան Զարապովը, Արշակ Նահապետյանը, Պողոս Իզմայիլյանը, Միխայիլ Լունկևիչը (վերջին երկուսը Երևանից էին) և ուրիշներ։ Ինչպես պարզվում է ներքին գործերի մինիստրության կազմած փաստաթղթերից, դատավարության ժամանակ հայ նարոդնիկներն իրենց պահել էին անկոտրում և հայտարարել, թե իրենք գիտակցաբար են մասնակցում հեղափոխական շարժումներին և հետագայում էլ չեն հրաժարվի ուսանողական հավաքներին մասնակցելուց։ Այդպիսի «հանդգնության» համար նրանց մի մասը ձերբակալվեց և հեռացվեց համալսարանից[7]։

Պետերբուրգի համալսարանի ղեկավարությունը խիստ միջոցների դիմեց այն ուսանողների նկատմամբ, որոնք մասնակցել էին 1869 թ. մարտի 21-ին գումարված 72 ուսանողների հավաքին։ Հայերից այդ հավաքին մասնակցել էին Վ. Շահվերդյանը, Պ. Իզմայիլյանը, Ա. Նահապետյանը և Մ. Լունկևիչը[8]։

Մ. Բակունինի գաղափարական ազդեցության տակ գտնվող ուսանողական այս հավաքի բոլոր մասնակիցները, այդ թվում նաև Վ. Շահվերդյանը, դատի տրվեցին։ Վ. Շահվերդյանը աքսորվեց իր ծննդավայրը՝ Լոռվա Իգահատ (Դանուշավան) գյուղը, որտեղ որոշ ժամանակ գտնվում էր ոստիկանության հսկողության տակ։ Վ. Շահվերդյանի հետագա գործունեությունը որոշակիորեն լուսավորական բնույթ է ստանում։ Հետագայում նա հաստատվում է Թիֆլիսում և զբաղվում մանկավարժությամբ՝ կրելով ժամանակի առաջավոր մանկավարժների, հատկապես Կ. Ուշինսկու գաղափարական ազդեցությունը։ Հավատարիմ մնալով նարոդնիկ լուսավորիչների սկզբունքներին, նա մշակել էր ուսումնադաստիարակչական աշխատանքը վերակառուցելու մի

---

6 Центральный государственный исторический архив в Москве (ЦГИАМ), сер. 95, оп. 1, ед. хр. 341, л. 441; З. Л. Швелидзе, Очерки из истории революционно-освободительной борьбы в Закавказье, Тбилиси, 1971, стр. 174—178.

6 ЦГИАМ, сер. 109, 1 экспед., ед. хр. 115, ч. 113, л. 27; З. Л. Швелидзе, *նշվ. աշխ., էջ 182։*

7 *Նույն տեղում։*

8 Центральный Государственный исторический архив в Ленинграде (ЦГИАЛ), ф. 1282, оп. 1, д. 333, л. 392—393; С. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, стр. 480—481.

նախագիծ, որը տպագրվել է «Մշակ» թերթի 1873 թ. 4, 5, 6 համարներում։ Սակայն այդ նախագիծը այդպես էլ չի ընդունվել։

Վ. Շահվերդյանը տարրական դպրոցների վերակառուցման իր նախագծի ներածական մասում քննադատում էր ազգային ուսումնարանների հնացած սիստեմը և պահանջում, որ «դաստիարակության սիստեմը գցվի քննողության, ընդհանուր հեղափոխության և հիմնական վերանորոգության տակ՝ թե դասական առարկաների և նրանց դաստիարակության սիստեմը և թե՛ երեխանց բարոյական մարդկություն տալը, որ նրանք ժամանակին կարողանան լինել ժողովրդի առողջ, օգտակար և մշակ անդամները»[9]։

Նարոդնիկական գաղափարներով տոգորված իր նախագծում Վ. Շահվերդյանը տարրական կրթությունը համարում է «ընդհանրապես կրթության հիմքը, դրա համար էլ նա պետք է ներկայացնի մի ամբողջ բազմակողմանի բան, որը պետք է ընդարձակվի ապագայի կրթությունով»[10]։

Վ. Շահվերդյանին հանգիստ չէր տալիս սովորելու բուռն ցանկությունը, և 1878 թ. նա նորից դիմում է Պետերբուրգի համալսարանի ռեկտորին՝ արևելյան ֆակուլտետում սովորելու խնդրանքով[11]։ Նրա խնդրանքն ուղարկվում է ուսումնական օկրուգի վարչություն։ Փաստերի բացակայության պատճառով դժվար է ասել հարցվե՞լ է արդյոք նրա դիմումը, թե ոչ։ Սակայն հավաստի է այն, որ նա շարունակել է իր նարոդնիկական գործունեությունն Անդրկովկասում իր կնոջ՝ Մ. Շահվերդյանի հետ։ 1880-ական թվականների սկզբին Վ. Շահվերդյանին հաջողվում է Թիֆլիսում բացել գրախանութ, որը երկար ժամանակ Անդրկովկասում նարոդնիկական գրականության տարածման կետերից էր։ Շահվերդյանները մանկավարժական աշխատանքին զուգահեռ նարոդնիկական աշխատանք են ծավալում Անդրկովկասի ռուսական գյուղերում։ 1874 թ. Վորոնցովկա (Կալինինո) գյուղում նարոդնիկական աշխատանքի ժամանակ Մ. Շահվերդյանը ձերբակալվեց և դատվեց 193-ի պրոցեսով[12]։

Շահվերդյանների ընտանիքի և նրանց նարոդնիկական աշխատանքների մասին իր հուշերում պատմում է Ա. Զավարյանը, որը Թիֆլիսում սովորելու տարիներին ապրել է Շահվերդյանների տանը և առաջին անգամ նարոդնիկական գաղափարների հետ ծանոթացել է այնտեղ։

1860-ական թվականների հեղափոխական շարժումներն արձագանք գտան նաև Լազարյան ճեմարանի և Թիֆլիսի ուսանողների շրջանում։ Ցարական կառավարությունն ուժեղացրեց հսկողությունը կովկասյան գիմնազիաներն ու սեմինարիաներն ավարտածների վրա։ Այսպես, օրինակ, 1869 թ. մայիսի 19-ին ժողովրդական լուսավորության մինիստրին ցարի տված ցուցումի համաձայն Թիֆլիսի և Քութայիսի գիմնազիաներն ավարտածները կարող էին համալսարան ընդունվել միայն Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի երաշխավորությամբ[14]։

---

9 «Մշակ», 1. II. 1873։

10 Նույն տեղում։

11 Ս. Արեշյան, նշվ. աշխ., էջ 204։

12 «Историческая библиотека», вып. 17, Петербург, 1907, стр. 1039—1041; «Деятели революционного движения России» («Био-библиографический словарь», т. 2, вып. IV).

14 ЦГИАЛ, ф. 1282, оп. 1, д. 333, лл. 392—393.

Ինքնակալության դաժանություններն ու խստությունները հայ երիտասարդությանը չէին կարող ետ պահել հեղափոխական շարժումներից։ Ընդհակառակն, գնալով մեծանում էր հեղափոխական շարժումներին մասնակցող հայերի թիվը։ Նրանց նույնիսկ հաջողվում է ստեղծել նաև հեղափոխական ինքնուրույն խմբակներ։ Դրանցից էր, օրինակ, 1869 թ. Ջավադ Իշխանյանի կազմակերպած խմբակը, որը Ս. Գ. Նեչաևի՝ Պետերբուրգի դավադրական «ժողովրդական դատաստան» («Народная расправа») կազմակերպության խմբակներից էր։ Ջ. Իշխանյանը խմբակի աշխատանքները համաձայնեցնում էր Ս. Նեչաևի հիմնական խմբի անդամ Ֆ. Ռիպմանի հետ[15]։

Ջ. Իշխանյանը Շուշի քաղաքից էր, նահանգական քարտուղարի որդի և սովորում էր Մոսկվայի համալսարանում։ Ուսանողական խռովություններին մասնակցելու համար Ս. Մուտաֆյանի հետ հեռացվելով Մոսկվայի համալսարանից, նա կարողացել էր ընդունվել Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիան։ Նրա խմբակում ընդգրկված էին հիմնականում կովկասցի ուսանողներ (Իբրահիմ Ռահիմով, Համիդ Հաջիբեկով, Հակոբ Սարիբեկյան, Ինդրիս Շանաե, Օլգա Վեշնյակովա և ուրիշներ)[16]։

Խմբակի անդամներն իրենց հավաքույթներն անց էին կացնում գաղտնի բնակարաններում։ Այդ նպատակին էր իր բնակարանը տրամադրել նաև Կ. Մելքումովը։ Ջ. Իշխանյանի խմբակի անդամները հիմնականում գտնվում էին Մ. Բակունինի և Պ. Տկաչևի գաղափարների ազդեցության տակ և ծրագրել էին զինված խմբեր ու գյուղացիական խռովություններ կազմակերպել։ Նրանք մտադիր էին հարձակվել զինապահեստների վրա և բռնագրավված զենքով զինել շարժման մասնակիցներին։ Խմբակը նույնիսկ փորձեց ստեղծել գաղտնի տպարան։ Փաստաթղթերը վկայում են, որ խմբակի ակտիվ անդամներ Ի. Ռահիմովը և Հ. Հաջիբեկովը «ինչ որ մի պարոնից» ստացել են «տպագրական տառեր», որոնք թաքցրել են համալսարանի մի լաբորատորիայում։ Խուզարկության ժամանակ, իրոք, հայտնաբերվեց վեց ֆունտ տառանիշ[17]։

Նեչաևյան կազմակերպության խմբակներն առհասարակ աչքի էին ընկնում տակտիկական բազմազանությամբ։ Այսպես, օրինակ, Ջ. Իշխանյանի խմբակի անդամներն ակտիվ պայքարի գիծ էին բռնել, մինչդեռ Ի. Պրիժովի գաղտնի խմբակը, որի անդամն էր Ս. Մուտաֆյանը, կանգնած էր Պ. Լավրովի՝ ժողովրդի մեջ հեղափոխական պրոպագանդայի աստիճանական տարածման տեսակետի վրա[18]։

1869 թ. Մոսկվայում և Պետերբուրգում ստեղծված բազմաթիվ նեչաևյան նարոդնիկական խմբակների գոյությունը երկար չտևեց։ Նրանց մեծ մասը հայտնաբերվեց ոստիկանության կողմից[19]։

Ոստիկանությունը և ժանդարմերիան գաղտնի հսկողություն սահմանեցին ուսանողների նկատմամբ և հետաքննական հանձնաժողովը ճշտեց 1870 թ. Պետերբուրգի ուսանողական հուզումների ակտիվ մասնակիցների ցուցակը։ Այդ ցուցակի մեջ հայերից հանդիպում են Կ. Մելքումովի, Ս. Վար-

---

15 «Государственные преступления в России в XIX в.», т. 1, М., 1953, стр. 205; «Правительственный вестник», 1871, № 171.

16 Նույն տեղում, էջ 205—206։

17 ЦГИАМ, ф. 109, 1 экспед. 1869, ед. хр. 115, ч. 4, л. 34.

18 «Государственные преступления в России в XIX в.», т. 1, стр. 205—206.

19 Նույն տեղում։

դանյանի, Ա. Գունիև-Գունիյանցի (Թիֆլիսից), Ե. Կաչկաչովի (Ղզլարից), Ն. Բաբաևի (Սամարայից) անուններին[20]։

1871 թ. նեչաևցիների դատավարությամբ նեչաևյան խմբակներին մասնակցելու մեղադրանքով Պետերբուրգի դատական պալատը պատասխանատվության ենթարկեց 16 կովկասցիների, որոնցից 7-ը հայեր էին (Ջ. Իշխանյան, Ս. Մուտաֆյան, Ամիրխանյան, Ե. Տեր-Ավետիսյան, Ե. և Ի. Ավետիսյաններ, Հարությունյան)։ Նույն թվականի հուլիսի 11-ին Պետերբուրգի դատական պալատի 2-րդ նիստում լսվում է 33 գործ, որոնք հիմնականում վերաբերում էին հայ, վրացի և ադրբեջանցի հեղափոխական երիտասարդներին։ Ջ. Իշխանյանը դատվում էր ոչ թե իբրև «ժողովրդական դատաստան»-ի շարքային անդամ, այլ որպես խմբակի ղեկավար՝ ինչպես հայտնի հեղափոխականներ Բ. Ի. Պրիժովը, Գ. Ուսպենսկին և ուրիշներ։ Մեղադրանքները ներկայացված էին անհատական կարգով։ Ջ. Իշխանյանը մեղադրվում էր ուսանող-երիտասարդական գաղտնի խմբակի կազմակերպման մեջ, խմբակ, որի նպատակն էր ցածր դասի նյութական դրության բարելավումը և քաղաքական հեղաշրջման ճանապարհով համընդհանուր հավասարության հաստատումը[21]։ Ի. Ռահիմովը, Հ. Հաջիբեկովը, Հ. Սարիբեկյանը և Ի. Շանաևը մեղադրվում էին Ջ. Իշխանյանի խմբակին անդամակցելու, նրա ժողովներին մասնակցելու, այն բանի համար, որ ծանոթացել և համերաշխվել էին կազմակերպության կանոնադրությանը, «ամբողջովին հետևել ընկերության նպատակներին», «զենքի ձեռք բերմանը», «կառավարության և գոյություն ունեցող վարչական կարգերի տապալման կապակցությամբ» անցկացվող միջոցառումներին[22]։ Ս. Մուտաֆյանը մեղադրվում էր Ի. Պրիժովի գաղտնի խմբակին անդամակցելու մեջ։

Ինչպես պարզվեց դատավարության ժամանակ, խմբակի կովկասցի անդամներն ուսումն ավարտելուց հետո Անդրկովկասում պետք է կատարեին գաղտնի կազմակերպության հանձնարարությունները, կապվեին տեղում սովորող երիտասարդությանը, ինչպես նաև Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից արտաքսվածների հետ և ստեղծեին նեչաևյան կենտրոնական կազմակերպության տեղական մասնաճյուղեր[23]։

1870-ական թվականների սկզբին Ցյուրիխում ձևավորվեց և ակտիվ հեղափոխական գործունեություն սկսեց նաև «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպությունը», որը հայտնի էր «Մոսկվիչներ»-ի խմբակ անունով։ Նրա կազմի մեջ մտան Ցյուրիխում գործող «Կովկասյան խմբակ»-ի և կանանց «Ֆրիչ» խմբակների անդամների զգալի մասը։ Կազմակերպության հիմնական խնդիրն էր երկրի ներսում բանվորների շրջանում հեղափոխական ագիտացիա և պրոպագանդա ծավալելը։ Այս կազմակերպությունն աշխատանքներ ծավալեց խոշոր բանվորական կենտրոններ Մոսկվայում, Իվանովո-Վոզնեսենսկում, Տուլայում, Կիևում, Օդեսայում, Թիֆլիսում և այլուր։

«Մոսկվիչներ»-ի խմբակի գործունեությանն ակտիվորեն մասնակցում

---

20 Նույն տեղում։

21 «Государственные преступления в России в XIX в.», т. 1. стр. 205—206; «Правительственный вестник», 1871, № 171.

22 ЦГИАМ, ф. 95, экспед. 1, ед. хр. 434, ч. 1, д. 33, 135.

23 «Правительственный вестник», 1871, № 181.

էին արտասահմանում սովորող մի խումբ հայ ուսանող-ուսանողուհիներ՝ Ս. Ղարդաշյանը, Հ. և Ե. Թումանյան քույրերը, Դ. Այվազյանը և ուրիշներ[24]։

Կանանց «Ֆրիչ» խմբակը կազմակերպել էին արտասահմանում բարձրագույն կրթություն ստացող Ռուսաստանից եկած ուսանողուհիները։ Այս խմբակը նույնպես հիմնականում գտնվում էր նարոդնիկական գաղափարների ազդեցության տակ։ Սակայն նրա անդամների վրա մեծ էր նաև 1-ին ինտերնացիոնալի ազդեցությունը։ Իզուր չէր, որ այդ կազմակերպությունը, ինչպես վկայում է Վ. Ֆիգները, իրեն անվանում էր 1-ին ինտերնացիոնալի սեկցիա[25]։ Հայերից այս խմբակի անդամներ էին Հ. և Ե. Թումանյան քույրերը։

Դեռ 1872 թ. Եվրոպայում սովորող հայ երիտասարդները Ցյուրիխում հիմնել էին ազգային խմբակ։ Նման խմբակ ունեին նաև վրացի ուսանողները։ Հաշվի առնելով այս խմբակների գաղափարական ընդհանրությունը, դրանք 1873 թ. միավորվեցին մեկ խմբակի մեջ՝ «Ցարմո» անվան տակ։ 1874 թ. ժնևում կովկասցի ուսանողները հրավիրեցին համագումար, որտեղ ստեղծվեց «Կովկասյան խմբակ»-ը[26]։ Համագումարի հրավիրման գործը ղեկավարում էր Ն. Նիկոլաձեն։ Նրա ակտիվ մասնակիցներից էր Ս. Ղարգաշյանը։ Համագումարին մասնակցել է նաև Դ. Այվազյանը, իսկ որպես Հայաստանի ներկայացուցիչ՝ Պ. Ալիբեկյանը։ «Կովկասյան խմբակ»-ի հիմնադիր համագումարում ծրագրային և տակտիկական հարցերը քննարկելու ժամանակ նրա մասնակիցները բաժանվեցին երկու մասի. մի մասն ընդունեց անջատ պայքարի դիրքորոշում, նպատակ ունենալով ստեղծել կովկասյան առանձին պետություն («Կովկասյան ֆեդերացիա»), իսկ մյուս՝ հեղափոխական մասը (Ս. Ղարդաշյան, Դ. Այվազյան և ուրիշներ), կանգնեց համառուսաստանյան ընդհանուր պայքարի դիրքում։ 1874 թ. «Կովկասյան խմբակ»-ը միավորվեց «Ֆրիչ» խմբակի հետ, որը, ինչպես ասվեց, մտավ նոր ձևավորվող «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» մեջ[27]։

Ցարական ժանդարմերիային շատ էին անհանգստացնում Ցյուրիխում տեղի ունեցող այս իրադարձությունները։

1873 թ. ցարի հրամանով Ցյուրիխում սովորող բոլոր ուսանողուհիները պարտավոր էին մինչև 1874 թ. հունվարի 1-ը վերադառնալ հայրենիք։ Հակառակ դեպքում նրանք զրկվում էին այնտեղ պաշտոններ ստանալու իրավունքից։ Այս կապակցությամբ Պ. Լավրովն անմիջապես հրավիրեց ռուսական գաղութի խորհրդակցություն, որտեղ զեկուցեց ստեղծված դրության մասին, իսկ Ա. Կրոպոտկինը ուսանողների ուշադրությունը հրավիրելով այդ պարագայի վրա՝ նրանց պայքարի կոչեց[28]։ Այս կապակցությամբ «Մշակ»-ը գրել է. «Այդ լուրը հասնելով Ցյուրիխ, կազմվել են ժողովներ և որոշվել, թե ի՞նչ ճանապարհ ընտրել։ Շատերը վերադառնում են, իսկ մի մասը՝ առավել

---

24 «Революционное народничество 70-х годов XIX в.», М., 1964, т. 1, стр. 475.

25 «Каторга и ссылка», М., 1927, № 4, стр. 9—10.

26 Վ. Պարսամյան, Նոր նյութեր Ցյուրիխի կովկասցի ուսանողների «Ярмо» խմբակի մասին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 2, էջ 57—69), Մ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 19—20։

27 Центральный государственный архив Октябрьской революции (ЦГАОР) СССР. ф. 112, оп. I, д. 142—165, ф. 109, эксп. документальных материалов о Всероссийской социально-революционной организации.

28 «Историческая библиотека», вып. 17, стр. 1049—1052.

մեծագույնը, կամենում է շարունակել իր ուսումը թե՛ Ցյուրիխում և թե՛ Եվրոպայի (մանավանդ Գերմանիայի) այլ համալսարանում»։ Միաժամանակ թերթը տեղեկություն է տալիս Ցյուրիխի ուսանողուհիների համար Պ. Լավրովի կարդացած դասախոսության մասին[29]։

«Մշակ»-ը վկայակոչելով ցյուրիխյան թերթերից մեկը, ընդգծում է, որ «Ռուսական կառավարության կողմից այդպիսի որոշման պատճառը՝ օրիորդների ի չարը գործադրելի գրությունն է առ քաղաքական վարմունքը»[30]։

1875 թ. փետրվարին արտասահմանից վերադարձավ «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» անդամների առաջին խումբը։ Այդ խմբի մեջ էին Հ. և Ե. Թումանյան քույրերը, ինչպես նաև Ս. Ղարդաշյանը[31]։

«Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպություն»-ը «Դեպի ժողովուրդը» նշանաբանով պրոպագանդիստական աշխատանք ծավալեց ոչ միայն երկրի կենտրոնում, այլև ծայրամասերում ու ազգային շրջաններում։ Կազմակերպության ակտիվ անդամների՝ Ս. Բարդինայի, Ի. Զոբոդարիի, Գ. Զանովիչի, Ս. Ղարդաշյանի և Ե. Թումանյանի ջանքերով 1875 թ. Թիֆլիսում ստեղծվեց առաջին նարոդնիկական կազմակերպությունը[32]։

Այս կազմակերպության հիմնադիր անդամ Ս. Ղարդաշյանի (Ստեփանյան) հեղափոխական-նարոդնիկական հայացքները վերջնականապես ձևավորվում են ուսանողական տարիներին, երբ նա սովորում էր Դրեզդենի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական բաժնում։ 1875 թ. փետրվարից, որպես «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» անդամ, Ս. Ղարդաշյանը ակտիվ մասնակցություն է ունենում նրա կանոնադրության մշակմանը։ Վերադառնալով Ռուսաստան, Ս. Ղարդաշյանը սկզբում պրոպագանդիստական աշխատանք է կատարում Պետերբուրգում, իսկ այնուհետև՝ 1875 թ. մարտին, վերադառնում է Մոսկվա, որտեղ «Մավր» կեղծանունով հեղափոխական պրոպագանդա է մղում հիմնականում բանվորների շրջանում, միաժամանակ կապեր պահպանելով Տուլայի, Կիևի, Օդեսայի, Սարատովի և այլ քաղաքների նարոդնիկների հետ[33]։

1875 թ. ապրիլի 4-ին Մոսկվայի կազմակերպության գործադիր մարմինն ընկավ ոստիկանության ձեռքը, և հեղափոխական աշխատանքը Մոսկվայում ու Պետերբուրգում գրեթե անհնարին դարձավ։ Ս. Ղարդաշյանը և կազմակերպության չձերբակալված մյուս անդամները մեկնեցին գավառները և այլ քաղաքներ՝ պրոպագանդիստական աշխատանքի։ Այս ծանր օրերին կազմակերպության նոր գաղտնի հանդիպավայրի հարցը լուծեց Ե. Թումանյանը[34]։

---

29 «Մշակ», 28. IV. 1873։

30 Նույն տեղում։

31 «Деятели революционного движения в России», вып. 1, т. II, М., 1930, стр. 348—349: «История классовой борьбы в Закавказье», Тбилиси, 1930, стр. 98.

32 Մ. Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 30։

33 Ս. Ղարդաշյանի մասին գրելիս օգտագործել ենք «Историческая библиотека», вып. 17. «Провинциальные кружки, 1873—1874 гг.» ժողովածուն, ինչպես նաև Ա. Հովսեփյանի և Մ. Թումանյանի «Նոր փաստաթղթեր հայ նարոդնիկների մասին» հրատարակումը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3)։

34 «Революционное народничество 70-ых годов XIX в.», М., 1964, т. I, стр. 499; «Историческая библиотека», вып. 17, стр. 1052—1054.

1875 թ. ապրիլից Ս. Ղարդաշյանը պրոպագանդիստական աշխատանքի է մեկնում Տուլա և Օրյոլ՝ Ա. Ցիցիանովի (Մ. Զենգինիձեի) հետ։ Ապա նա անցնում է Օդեսա, որտեղ աշխատանք է ծավալում հատկապես բանվորների շրջանում։ Օդեսայում Պ. Միկելաձեի օգնությամբ նա ձեռք է բերում կեղծ անձնագիր և մի քանի անգամ գնում արտասահման՝ կապեր պահպանելով կենտրոնի հետ։ Նա արտասահմանից Յասսիի վրայով գրականություն և նամակներ էր ուղարկում Մոսկվա։ Հետագայում դատաքննչական օրգաններին հաջողվեց ապացուցել, թե ինչու Ս. Ղարդաշյանը Դրեզդենից Մոսկվա էր վերադարձել ոչ թե ուղիղ ճանապարհով, այլ Յասսիի վրայով. դա այն ուղին էր, որտեղից ստացվում էր արտասահմանյան գրականությունը[35]։

Վերջին անգամ Ս. Ղարդաշյանը Մոսկվա է դալիս 1875 թ. հունիսին, ձեռքին ունենալով Օրյոլից ստացված անձնագիր՝ իշխան Կոչակիձեի անունով։ Օգոստոսի 12-ին Ա. Գամկրելիձեի հյուրանոցային համարում նա ձերբակալվում է։ Ոստիկանությունը խուզարկում է հյուրանոցում նրա զբաղեցրած սենյակը և անձնական իրերի հետ բռնագրավում նաև «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության»-ը պատկանող գումարը (9645 ռ.)։ Այս գումարը ետ ստանալու համար, կազմակերպությունը մշակում է գործողության հատուկ պլան։ Այդ պլանի համաձայն Ս. Ղարդաշյանը հին ամսաթվով պետք է նամակներ գրեր իր հարազատներին, իսկ վերջիններս պետք է ապացուցեին, որ նրա մոտ եղած գումարը պատկանում է իրենց և իրենք են այն ուղարկել Ս. Ղարդաշյանին՝ զանազան գնումների և Մոսկվայում տպարան հիմնելու համար։ Ս. Ղարդաշյանը բանտից այդ նամակները հասցեագրում է Գանձակի և Թիֆլիսի իր հարազատներին։ Սակայն 1875 թ. դեկտեմբերին ոստիկանությունը խուզարկելով արդեն ձերբակալված Ն. Գյորգևսկայայի և Ե. Վեդենսկու բնակարանները, հայտնաբերում է բանտից ստացված չորս ծրար։ Դրանց մեջ էին Ս. Ղարդաշյանի նամակները, որոնք պետք է ուղարկվեին նրա հարազատներին։ Ս. Ղարդաշյանը գրանցում եղբայրներից ու մորից խնդրում էր ցուցմունք տալ, որ բռնագրավված 9645 ռ. պատկանում է իրենց։ Որպեսզի նրանց ցուցմունքը հիմնավորվի, նա հին ամսաթվով նամակներում հաշիվ էր տալիս հարազատներին՝ իր կատարած ծախսերի մասին։ Օրինակ՝ 1875 թ. օգոստոսի 5-ի ամսաթիվը կրող նամակում նա եղբորը գրում է, թե եկել է Մոսկվա՝ իր տպարանի բացման գործով, սակայն գործը գլուխ չի գալիս։ Այս նամակը եղբայրը պետք է ներկայացներ իր հարցաքննության ժամանակ, ապացուցելու համար, թե ինչ նպատակով է Ս. Ղարդաշյանը Մոսկվա եկել։

Ս. Ղարդաշյանն առանձին ծրարի մեջ էր դրել նաև մուրհակներ՝ մոր և եղբայրների անունով, առանձին-առանձին, 9645 ռ. համար։ Ահա թե ինչ է գրում Ս. Ղարդաշյանն իր եղբորը՝ Բեգլարին. «Ինձ մոտ եղած գումարը խմբակային է, անդամությանն է, որ դա հավաքվել է հեղափոխական խմբակի համար, հիմա դատարանը ամբողջովին պտտվում է դրա շուրջը, որ գտնի մի մարդ, որ կգա և կհայտնի, թե այդ գումարը ինքն է ինձ տվել։ Փրկիր գումարը, չնայած օտար, բայց և քեզ, և ինձ համար այդ գումարը թանկ է մարդուց։

35 «Революционное народничество 70-ых г. XIX в.», стр. 350, 476, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 68—72։

Դիտավորյալ, որպեսզի նամակները հասնի ձեզ, ես ուղարկում եմ ապահով մարդու միջոցով»[36]։

Սակայն Ս. Ղարդաշյանի և կազմակերպության ազատ մնացած անդամների պլանները ձախողվեցին։ Ոստիկանության ձեռքն ընկան նրա այս վերջին և բանտարկության սկզբում գրած նամակները, որոնցից մեկը գրված էր ծածկագրով՝ Օդեսա, Պ. Միկելաձեին, իսկ մյուսը՝ Դրեզդեն քաղաքի իր տանտիրուհուն՝ Ավգուստա Հեննինգ Դուրելին։ Առաջին նամակով Ս. Ղարդաշյանը Պ. Միկելաձեին հայտնում էր ձերբակալության և իրենց հետագա անելիքների մասին՝ կազմակերպությանն օգնելու նպատակով։ Մյուս նամակով նա տանտիրուհուն հայտնում էր իր ձերբակալության մասին և խնդրում ստանալ իր անունով ստացվող նամակներն ու գրքերը[37]։

Ահա այս երկու նամակների միջոցով էր, որ ցարական ոստիկանությանը հաջողվեց բացահայտել Ս. Ղարդաշյանի ով լինելը, իսկ 1875 թ. դեկտեմբերին նրա գրած նամակները ոստիկանության մոտ այլևս կասկած չէին հարուցում, որ վերոհիշյալ գումարը պատկանում էր «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության»-ը և, որ Ս. Ղարդաշյանին էին վստահված եղել կազմակերպության ֆինանսական գործերն ու դրամարկղը։ Եվ, իրոք, Ս. Ղարդաշյանն այն գործիչներից էր, որոնք կազմակերպում էին արտասահմանից անհրաժեշտ զենքի ու գրականության ձեռք բերման, ստացման և դրանք Ռուսաստան առաքելու շատ կարևոր գործը[38]։

Կազմակերպության դրամական միջոցները գոյանում էին տարբեր ճանապարհներով, այդ թվում նաև ձևական ամուսնությունների միջոցով։ Այսպես, օրինակ, Մոսկվայում Ս. Ղարդաշյանի բնակարանի խուզարկության ժամանակ կազմակերպությանը պատկանող մյուս գումարներից բացի, ոստիկանության ձեռքն ընկավ նաև Պետերբուրգի հաշվարկային բանկի № 0289 դրամատոմսը (1100 ռ.)՝ Սոֆյա Նիկիտայի Թումանյանի անունով։ Դա հենց այն գումարն էր, որ վերջինս նվիրել էր աղջկան՝ Ե. Թումանյանին, նրա ամուսնության առթիվ։ Ե. Թումանյանը ձևականորեն ամուսնացել էր կազմակերպության անդամ Պ. Գամկրելիձեի հետ՝ նպատակ ունենալով օգնել կազմակերպության դրամական միջոցների ստեղծմանը։ Նրանց ձևական ամուսնությունը տեղի էր ունեցել 1875 թ. հուլիսի 13-ին, Մոսկվայում։ Հանդիսությանը ներկա էին կազմակերպության մի քանի անդամներ, այդ թվում Ս. Ղարդաշյանը, որի մոտ խուզարկության ժամանակ այլ դրամական ծախսերի մեջ հայտնաբերվեց 41 ռ. հարսանիքի ծախսերի հաշվարկը[39]։

Դրանից անմիջապես հետո Ե. Թումանյանը Ա. Գամկրելիձեի հետ մեկնում է պրոպագանդիստական աշխատանքի նախ Իվանովո-Վոզնեսենսկ, ապա Շույա, որտեղ մյուս պրոպագանդիստների հետ նրանք ձերբակալվում են[40]։

Մոսկվայի «Ուկրաինա» հյուրանոցում ոստիկանությունը 1875 թ. օգոստոսի 12-ին խուզարկում է Ա. Գամկրելիձեի սենյակը և հայտնաբերում երեք

36 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 71—72, «Историческая библиотека», вып. 17, стр. 1082.

37 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 65։

38 Նույն տեղում, էջ 69—72, «Революционное народничество 70-ых годов XIX в.», т. 1, стр. 476.

39 «Историческая библиотека», вып. 17, стр. 1062, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 70—71։

40 Նույն տեղում։

հարյուր օրինակ արգելված գրքեր ու երեք ատրճանակ։ Ահա այս խուզարկության ժամանակ էր, որ Ա. Դամկրելիձեին այցի եկած Ս. Ղարդաշյանը, Վ. Լյուբատովիչը և Ա. Ցիցիանովը (Մ. Զենգինիձեն) ձերբակալվեցին։ Ձերբակալությունից հետո Ս. Ղարդաշյանի հյուրանոցային համարում հայտնաբերվեցին վերոհիշյալ 9645 ռ., 1100 ռ. դրամատոմսը և զանազան մուտքի-ելքի հաշիվներ[41]։

Ձերբակալվածներին Մոսկվայի բանտից տեղափոխեցին Պետրոպավլովյան բանտ, որտեղ նրանք անցկացրին երկու տանջալից տարիներ։ Դատական պրոցեսը, որ սկսվեց 1877 թ. փետրվարի 21-ին և ավարտվեց մարտի 14-ին, հայտնի է «50-ի» կամ «Մոսկվացիների դատավարություն» անունով։ Հայերից դատվում էին երկուսը՝ Ս. Ղարդաշյանը և Ե. Թումանյանը։ Դ. Այվազյանին 1876 թ. հաջողվել էր փախչել բանտից։ Ցարական դատարանը դաժան վճիռ կայացրեց. դատվողներից 23-ին տաժանակիր աշխատանքի ուղարկեցին։ Հինգ հոգու, որոնց դատավճիռը բեկման ենթակա չէր, ամհապաղ ուղարկեցին Խարկովի կենտրոնական բանտ՝ «Ցենտրալկա»։ Սրանց մեջ էր Ս. Ղարդաշյանը, որը դատապարտվել էր 5 տարվա տաժանակրության[42]։

Խարկովի բանտից նրանց ազատելու համար մի շարք պլաններ մշակվեցին կազմակերպության այն անդամների կողմից, որոնք խուսափել էին բանտարկությունից։ Նրանց մեջ էին նաև Դ. Այվազյանը, Հ. Թումանյանը, ինչպես նաև նրա քույրը՝ Ե. Թումանյանը, որը երկու տարի Պետրոպավլովյան բանտում անցկացնելուց հետո ազատվել էր։

Հ. և Ե. Թումանյանները ղրիմահայեր էին, Թեոդոսիա քաղաքից. ունեին ազնվական ծագում։ Ավարտելով Թեոդոսիայի և ապա Օդեսայի գիմնազիաները, նրանք ստացել էին լավ կրթություն։ Ավագ քույրը՝ Հռիփսիմեն, 1870 թ. ընդունվել էր Ցյուրիխի համալսարանի փիլիսոփայության բաժինը. դա բացառիկ երևույթ էր և նա միակ վիճն էր այդ բաժնում[43]։ Իսկ կրտսեր քույրը՝ Եկատերինան (1855—1927) 17 տարեկան մի աղջիկ 1872 թ. մեկնում է արտասահման՝ բժշկական բարձրագույն կրթություն ստանալու։ 1875 թ. «Համառուսական տոցիալ-հեղափոխական կազմակերպության» մյուս անդամների հետ Ռուսաստան վերադառնալով, Հռիփսիմեն անցնում է հեղափոխական գործունեության։ Խուսափելով բանտարկությունից, նա ակտիվ մասնակցություն է ունենում 1878 թ. Խարկովի նահանգի Նովոբելգորոդյան բանտից մի խումբ բանտարկյալների՝ Ա. Դոլգուշինի, Պ. Ալեքսեևի, Ս. Ղարդաշյանի և այլոց փախուստի նախապատրաստմանը, որի համար Խարկովի գեներալ նահանգապետի հրամանով աքսորվում է Իրկուտսկի նահանգ։ Հ. Թումանյանի աքսորվելու առթիվ «Народная воля» թերթը գրել է. «1879 թ. հուլիսի 24-ին վարչական կարգով Արևելյան Սիբիր է աքսորվել Հ. Թումանյանը՝ «50-ի դատավարությամբ» դատապարտված Ե. Թումանյանի քույրը։ Խուզարկության ժամանակ նրա մոտ ոչինչ չի գտնվել, այնուամենայնիվ նրան ուղարկում են հեռավոր աքսոր, լոկ նրա համար, որ լինելով կենտրոնական բանտում նստող Ղարդաշյանի հարսնացուն, նա աշխատում էր նրա հետ տեսակցության իրավունք ստանալ»[44]։ Նույն համարում հաղորդում կա նաև Ե. Թումանյանի

41 Նույն տեղում։

42 «Процесс 50-ти», М., 1906, стр. 161—162.

43 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 75—76, «Մշակ», 27. III. 1873։

44 «Народная воля», 1879, № 1, стр. 18.

60-ամյա մոր մասին, որին արտաքսել են Խարկովից և հանձնել ոստիկանության հսկողությանը, այն բանի համար, որ Թեոդոսիայից եկել է դստեր հետ տեսակցություն ունենալու[45]։

Հ. Թումանյանը հեղափոխական կազմակերպությանը նյութապես օգնելու նպատակով ձևականորեն ամուսնացել էր Ժելտովսկու հետ, սակայն իրականում նա Ս. Ղարդաշյանի նշանածն էր։ Հետագայում Իրկուտսկի նահանգապետին նրա բոլոր խնդրանքները՝ թույլ տալու իր ամուսնությունը Ս. Ղարդաշյանի հետ, ապարդյուն են անցնում։ Նա մահացել է 1882 թ. Իրկուտսկի նահանգի Տունիկա գյուղում։ Կրտսեր քույրը՝ Ե. Թումանյանը, 1872—1875 թթ. Ցյուրիխում, Ժնևում ու Փարիզում ուսանելիս ակտիվ մասնակցություն է ունեցել ռուս վտարանդիների և սովորողների կազմակերպած նարոդնիկական խմբակներին։ Շվեյցարիայում նա Ս. Բարդինայի, Վ. և Օ. Սուբոտինների և այլոց հետ «Ցրիչ» հեղափոխական խմբակի ամենաակտիվ անդամներից էր, իսկ այնուհետև «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» ակտիվ անդամը[46]։ Նա աչքի է ընկել ոչ միայն Շուլյայում և Իվանովո-Վոզնեսենսկում կատարած պրոպագանդիստական աշխատանքով (Եկատերինա Պետրովնա ծածկանունով), այլև Ա. Գամկրելիձեի հետ լուծել է կազմակերպության անլեգալ աշխատանքի և կոնսպիրատիվ բնակարանի հարցը։ 1875 թ. օգոստոսի 9-ին նա ձերբակալվում է, բանտարկվում Շուլյայի, ապա Մոսկվայի բանտում, իսկ հետո Պետերբուրգի Պետրոպավլովյան ամրոցում։ 1875 թ. ազատվելով Պետրոպավլովյան բանտից, նորից ձեռնամուխ է լինում ակտիվ հեղափոխական գործունեության և ինչպես ասվեց, մասնակցում է նաև Խարկովի կենտրոնական բանտից քաղաքական բանտարկյալների փախուստի նախապատրաստմանը, որի ձախողումից հետո, 1879 թ. նոր բանտարկությունից խուսափելով, անցնում է արտասահման և այնտեղ մնում մինչև 1886 թ.։ Ներքին գործերի մինիստրության թույլտվությամբ նա վերադառնում է հայրենիք և երկար տարիներ մնում ոստիկանության հսկողության տակ։ Հետագայում վերադառնում է իր ծննդավայրը՝ Թեոդոսիա։ Ե. Թումանյանը առաջին անգամ, ինչպես ասվեց, ձևականորեն ամուսնացել է Ա. Գամկրելիձեի հետ, երկրորդ անգամ օրինական ձևով՝ Ջելինսկու հետ[47]։ Ե. Թումանյանը այն փոքրաթիվ նարոդնիկներից էր, որոնք տեսան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Այլ ճակատագիր ունեցավ հայ-հեղափոխական նարոդնիկ Ս. Ղարդաշյանը։ Խարկովի կենտրոնական բանտում երկու տարի մնալուց հետո, 1880 թ. նա շղթայակապ ուղարկվում է Արևելյան Սիբիր։ Նրան տեղավորում են Մցենսկու փոխադրական բանտում, իսկ 1881 թ. ուղարկում են Կարիի ոսկու հանքերը՝ տաժանակրության։ 1883 թ. հետո, որպես աքսորական, բնակվում է Ռուսաստանի դանազան նահանգներում (Անդրբայկալյան երկրամաս, Տոբոլսկի նահանգ)։ 1887 թ. նրան թույլատրվում է ապրել միայն Տոբոլսկի մարզում, ուր մնում է մինչև 1904 թ.[48]։ Քսանհինգ տարի Սիբիրում անցկաց-

45 Նույն տեղում։

46 «Историческая библиотека», вып. 17, стр. 1080—1082; «Революционное народничество 70-ых годов XIX в.», т. I, стр. 499.

47 Նույն տեղում։

48 «Историческая библиотека», вып. 17, стр. 1082, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 74—75։

նելուց հետո անժամանակ ծերացած ու առողջությունը քայքայված վիճակում նրան թույլատրվում է վերադառնալ իր ծննդավայրը։ Բաքու վերադառնալուց հետո նրան հեղափոխական շարժումներից մեկուսացնելու նպատակով, աշխատանքի են նշանակում Մուղանի տափաստանում՝ իբրև երկաթուղային ինժեներ։ Նա մահացել է 1918 թ.։

Այսպիսով, 1860—70-ական թվականներին մի շարք ուսանող հայ երիտասարդներ տարվել են նարոդնիկական գաղափարներով, ակտիվորեն մասնակցել Մոսկվայի, Պետերբուրգի և արտասահմանի նարոդնիկական խմբակներին, իսկ ոմանք էլ դրանցում խաղացել են ղեկավար ղեր։

УЧАСТИЕ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ В НАРОДНИЧЕСКОМ ДВИЖЕНИИ

(60—70-ые годы XIX в.)

ГРАНУШ ГЕВОНДЯН

Резюме

В русском народническом движении 60—70-ых гг. XIX в. заметное участие принимали также студенты-армяне, обучавшиеся в высших учебных заведениях России. Под непосредственным влиянием прогрессивной русской мысли среди армянского студенчества Петербурга и Москвы постепенно укореняется идея служения народу, идея его просвещения, борьбы за его социальное и политическое освобождение. В народническом движении, развернувшемся в Москве, Петербурге и за границей, видное участие принимали В. Шахвердян, А. Наапетян, С. Зарапов, Дж. Ишханян, Ст. Кардашян, сестры Р. и Е. Туманяны, Д. Айвазян и многие другие. Некоторые из них (Дж. Ишханян, Ст. Кардашян) входили в число руководителей отдельных кружков.